Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

..... 2017 թվականի N .....Ն

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 122-Ն որոշման N1 հավելվածի 142-րդ կետի պահանջը՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Հաստատել «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգը»՝ համաձայն Հավելվածի:

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
.... N ... -Ն որոշման

ԿԱՐԳ

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման (կրթության մեջ ներառման), բոլոր շահագրգիռ և պատասխանատու կառույցների համագործակցության հետ կապված հարաբերությունները:
2. Շահագրգիռ և պատասխանատու կառույցներ են հանդիսանում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը, ՀՀ Ոստիկանությունը, Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները (դրանց կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ), հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները (այսուհետ՝ ուսումնական հաստատություն):
3. Պարտադիր կրթությունից դուրս մնացած են համարվում 6-18 տարեկան՝

- ուսումնական հաստատություն չհաճախած/որևէ ուսումնական հաստատությունում չհաշվառված,
- որևէ ուսումնական հաստատությունում սովորած, հաշվառված, սակայն որոշակի ժամանակահատվածում չհաճախած/չհաճախող
- որոշակի ժամանակահատվածում ուսումնական հաստատություն հաճախած, սակայն, ծնողի/նրա օրինական ներկայացուցչի/ դիմումի հիման ուսումը կիսատ թողած երեխաները:

4. Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտելու և ուղղորդելու համար՝

4.1. **ուսումնական հաստատություն չհախած/որևէ ուսումնական**

հաստատությունում չհաշվառված լինելու դեպքում՝

- Ուսումնական հաստատությանն ամրագրվում են սպասարկման տարածքներ:
- Տարածքային ինքնակառավարման մարմինը (այսուհետ՝ ՏԻՄ) հաշվառում է համայնքում բնակվող, մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը 6 տարին լրացող երեխաներին և մինչև օգոստոսի 10-ը՝ ըստ սպասարկման տարածքների՝ երեխաների անվանացանկերը տրամադրում է ուսումնական հաստատությանը:
- Անվանացանկի ևս մեկ օրինակ (էլեկտրոնային) ուղարկվում է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնին (այսուհետ՝ ԿՏԱԿ), որտեղ վարվում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգը:
- Ուսումնական հաստատությունը «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում» մուտքագրում է առաջին դասարան ընդունված երեխաներին:
- Ուսումնական հաստատությունն առաջին դասարանների կոմպլեկտավորումից հետո (մինչև սեպտեմբերի 15-ը) համեմատում է ՏԻՄ-ից ստացված անվանացանկը դպրոց ընդունված երեխաների ցուցակների հետ և դպրոց չդիմած երեխաների վերաբերյալ **երեք աշխատանքային օրվա ընթացքում** հարցում է կատարում ԿՏԱԿ-ին՝ այդ երեխաների՝ այլ ուսումնական հաստատությունում հաշվառվելու մասին:
- ԿՏԱԿ-ը բնակչության պետական ռեգիստրից ստանում է այն երեխաների տվյալները, որոնց վեց տարեկանը լրանում է մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը:
- Բնակչության պետական ռեգիստրից ստացված տվյալները համակարգի միջոցով համեմատվում են «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում» մուտքագրված առաջին դասարանցիների տվյալների հետ:
- Համեմատության արդյունքում բացահայտվում են՝

ա) այն երեխաները, որոնք չեն մուտքագրվել որևէ ուսումնական հաստատության կառավարման տեղեկատվական համակարգում:

բ) այն երեխաները, որոնք մուտքագրվել են կառավարման տեղեկատվակն համակարգում, սակայն նրանց տարիքը արդեն 7 է:

- Բացահայտված երեխաների ցուցակները հասանելի են «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում և տրամադրվում են հետևյալ շահագրգիռ և պատասխանատու կառույցներներին՝

ա) ՀՀ կրթության և գիտության նախարարությանը.

բ) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.

գ) ՀՀ առողջապահության նախարարությանը.

դ) ՀՀ Ոստիկանությանը.

ե) Խնամակալության հանձնաժողովին

զ) Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններին.

է) Սոցիալական դեպք վարողներին:

- ԿՏԱԿ-ը ուսումնական հաստատության տեղեկատվական բազայից ճշտում է երեխաների՝ ուսումնական հաստատությունում ընդգրկվածությունը և **երեք աշխատանքային օրվա ընթացքում** համապատասխան տեղեկանք տրամադրում ուսումնական հաստատությանը:
- Որևէ ուսումնական հաստատությունում չընդգրկված երեխաների վերաբերյալ տեղեկատվությունը ԿՏԱԿ-ը **տասը աշխատանքային օրվա ընթացքում** ներկայացնում է ՏԻՄ-ին:
- ՏԻՄ ղեկավարը ստացված տեղեկատվությունը **երեք աշխատանքային օրվա ընթացքում** ուղարկում է տարածքի սոցիալական ծառայություն՝ նշված երեխաների կարգավիճակը ճշտելու և ուսումնական հաստատությանը չդիմելու պատճառները բացահայտելու համար:
- Տարածքի սոցիալական ծառայությունը, ըստ երեխայի բնակության վայրի, «դեպք վարողների» միջոցով **երեք աշխատանքային օրվա ընթացքում** ուսումնասիրում է իրարավիճակը, ըստ անհրաժեշտության ներգրավում է շահագրգիռ մարմիններին (ուսումնական հաստատություն, առողջապահական հաստատություն, ոստիկանություն, Խնամակալության հանձնաժողով (այսուհետ՝ ԽՀ), **քսան աշխատանքային օրվա ընթացքում** մշակում է երեխային (ընտանիքին) սոցիալական աջակցման ծրագիր և, համագործակցելով ընտանիքի հետ, երեխային ուղորդում է համապատասխան ուսումնական հաստատություն:
- Եթե երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ուսումնական հաստատությունը կազմակերպում է երեխայի հոգեբանամանկավարժական գնահատումը և մշակում անհատական ուսումնական պլան:
- Եթե հայտնի է երեխայի բնակության վայրը, հայտնաբերողը փաստի մասին **երեք աշխատանքային օրվա ընթացքում** տեղեկացնում է համայնքի ղեկավարին:
- Համայնքի ղեկավարը երեխայի անձը և խնդիրը ճշտելուց հետո **երեք աշխատանքային օրվա ընթացքում** դիմում է տարածքային սոցիալական ծառայություն՝ դեպքն ուսումնասիրելու:
- «Դեպք վարողը» **տասը աշխատանքային օրվա ընթացքում՝**

ա) գնահատում է իրավիճակը, այդ թվում՝ երբևէ հաճախել է դպրոց, թե ոչ, դպրոց չհաճախելու պատճառները.

բ) անհրաժեշտության դեպքում սահմանում է ընտանիքի անհատական սոցիալական ծրագիրը՝ ներգրավելով շահագրգիռ կողմերին և կառույցների.

գ) երեխայի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի առկայության դեպքում դիմում է Հանրապետական կամ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ՝ երեխայի կրթական

կարիքները գնահատելու և, ըստ անհրաժեշտության, ԱՈՒՊ կազմելու համար.

4.2. **Որևէ ուսումնական հաստատությունում սովորած, հաշվառված, սակայն որոշակի ժամանակահատվածում ուսումնական հաստատություն չհաճախելու դեպքում՝**

1) եթե երեխան ուսումնական հաստատություն չի հաճախում, ուսումնական հաստատությունը «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում կատարում է համապատասխան գրառում (ստեղծում է հայտ)՝ նշելով պատճառը:

2) «Սովորողի հիվանդությունը» որպես պատճառ նշելու դեպքում հայտը տեսանելի է դառնում սոցիալական դեպք վարողին և այն բուժհիմնարկին, որտեղ հաշվառված է տվյալ երեխան:

3) Բուժհիմնարկը հաստատում կամ մերժում է դպրոցի կողմից բացված հայտը:

4) Եթե բուժհիմնարկը հաստատում է հայտը, ապա կատարում է նաև նշում, որ երեխան արդեն կարող է հաճախել ուսումնական հաստատություն: Այս դեպքում դպրոցը ևս նշում է կատարում, որ երեխան արդեն հաճախում է ուսումնական հաստատություն:

5) Եթե բուժհիմնարկը մերժում է հայտը, այդ մասին տեղեկատվությունն ուղարկվում է սոցիալական դեպք վարողին:

6) Եթե բուժհիմնարկը ոչ մի գործողություն չի կատարում ուսումնական հաստատության հայտի վերաբերյալ, ապա այդ մասին տեղեկատվությունն ուղարկվում է սոցիալական դեպք վարողին:

7) «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» համակարգում հայտ կարող է բացել նաև բուժհիմնարկը: Այս դեպքում, եթե ուսումնական հաստատությունը ոչ մի գործողություն չի կատարում բուժհիմնարկի կողմից բացված հայտի վերաբերյալ, ապա տվյալ հայտը ուղարկվում է սոցիալական դեպք վարողին:

8) Հայտեր կարող է ստեղծել նաև սոցիալական դեպք վարողը:

9) Եթե ուսումնական հաստատության և բուժհիմնարկի կողմից բոլոր գործողությունները կատարվել են, սոցիալական դեպք վարողը կարող է փակել տվյալ հայտը և արխիվացնել:

10) Եթե բացակայության պատճառը հնարավոր չէ ճշտել, կամ այնպիսինն է, որ ուսումնական հաստատության ռեսուրսները բավարար չեն այն վերացնելու և կարող է հանգեցնել երեխայի ուսումնական հաստատությունից դուրս մնալուն, ուսումնական հաստատությունը, **հինգ աշխատանքային օրվա ընթացքում,** այդ մասին տեղյակ է պահում երեխայի բնակության վայրի ԽՀ մարմնին և սոցիալական ծառայությանը:

11) Բացված հայտերի մասին ամբողջ տեղեկատվությունը, պատմությունը և աշխատող կողմերի գործողությունները հասանելի են բոլոր շահագրգիռ և

պատասխանատու կառույցներներին։

12) Տարածքի սոցիալական ծառայությունը, ըստ երեխայի բնակության վայրի, «դեպք վարողների» միջոցով **տասը աշխատանքային օրվա ընթացքում** ուսումնասիրում է իրավիճակը և, ըստ անհրաժեշտության, ներգրավելով շահագրգիռ մարմիններին (ուսումնական հաստատություն, առողջապահական հաստատություն, ոստիկանություն, ԽՀ հանձնաժողով) մշակում է երեխային (ընտանիքին) սոցիալական աջակցման ծրագիր և հետևում, որ երեխան վերսկսի հաճախել դպրոց։

4.3. **Որոշակի ժամանակահատվածում ուսումնական հաստատություն հաճախելու, սակայն ծնողի դիմումի հիման վրա ուսումը կիսատ թողնելու դեպքում՝**

- Ուսումնական հաստատության տնօրենը ծնողի դիմումի հիման վրա երեխային հանում է հաշվառումից, եթե դիմումում հստակ նշված է տեղափոխման վայրը, առկա է տեղեկանք տվյալ ուսումնական հաստատությունից երեխային ընդունելու վերաբերյալ։ Արտերկիր մեկնելու պարագայում անհրաժեշտ է ավիատոմսի լուսապատճենի առկայությունը։
- Եթե երեխան ծնողի դիմումի հիման դուրս է եկել ուսումնական հաստատություն հաշվառումից և այլ դպրոցում չի հաշվառվել, ԿՏԱԿ-ը **երեք աշխատանքային օրվա ընթացքում** այդ մասին տեղեկատվություն է ուղարկում երեխայի բնակության ԽՀ մարմնին,
- ԽՀ մարմինը **տասը աշխատանքային օրվա ընթացքում** տարածքային սոցիալական ծառայության «Դեպք վարողի» միջոցով ուսումնասիրում է իրավիճակը։
- «Դեպք վարողը» շարունակում է գործել նախորդ տարբերակի ընթացքով։
- Կայացված որոշումների և արդյունքների մասին տեղեկացվում է ԿՏԱԿ-ը։